# ՄԱՍԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N ԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-22/85

ք. Մասիս « 28 » հոկտեմբեր 2022թ.

Մասիս համայնքը, ի դեմս համայնքի ղեկավար Դ. Համբարձումյանի, որը գործում է համայնքի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Օն-Էներջի>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Ռաֆայելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է արտաքին լուսավորության ցանցի շահագործման և սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը

ավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 10 000 000 (տասը միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է

անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը՝ ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Մասիս համայնք | << ՕՆ-ԷՆԵՐՋԻ >> ՍՊԸ |
| ք. Մասիս Կենտրոնական հր. թիվ 4 | Արարատի մարզ գ. Մխչյան Ստեփանյան23 |
| ՀՀ Ֆինանսների նախարարություն | ՀՎՀՀ 04238917 |
| Հ/Հ 900 432 450 022 | Հ/Հ 2051522236111001 |
| ՀՎՀՀ 04240324 | <<Ինեկոբանկ >> ՓԲԸ |
| Դ. Համբարձումյան | Տնօրեն՝ Գ.Ռաֆայելյան՝ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1
« 28 » հոկտեմբեր 2022թ. կնքված
ԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-22/85 ծածկագրով պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | մատուցման | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ժամկետը |
| 1 | 50231100 | Կից ներկայացված է մատուցվող ծառայությունների անվանումները և միավորի արժեքները՝ ծավալաթերթ-նախահաշիվը**: Ծառայությունները մատուցվելու են պատվիրատուի պահանջը /գրավոր կամ հեռախոսային կապի միջոցով/ ստանալուց ողջամիտ ժամկետում, բայց ոչ ուշ քան մեկ օրացուցային օրվա ընթացքում: Եթե ծառայությունների մատուցումը գերազանցելու է մեկ օրացուցային օրը, ապա Կատարողը պարտավոր է այդ մասին անմիջապես տեղյակ պահել Պատվիրատուին գրավոր կամ հեռախոսային կապի միջոցով: Ծառայությունները մատուցվելու են Վաճառողի ուժերով և միջոցներով: | դրամ | 10 000 000 | 1 | Մասիս համայնք | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 31.12.2022թ. |

*Պայմանագիրը կնքվելու է 10 000 000 /տասը միլիոն/ ՀՀ դրամ ընդհանուր գումարով, սակայն ծառայությունները մատուցվելու են ըստ պատվերի, իսկ վճարումները կատարվելու են փաստացի մատուցված ծառայությունների դիմաց

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մասիս համայնք
ք. Մասիս Կենտրոնական հր. թիվ 4
ՀՀ Ֆինանսների նախարարություն
Հ/Հ 900 432 450 022
ՀՎՀՀ 04240324

Դ. Համբարձումյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

<< ՕՆ-ԷՆԵՐՋԻ >> ՍՊԸ
Արարատի մարզ գ. Մխչյան Ստեփանյան23
ՀՎՀՀ 04238917
Հ/Հ 2051522236111001
<<Ինեկոբանկ >> ՓԲԸ

Տնօրեն՝ Գ.Ռաֆայելյան՝

/ստորագրություն/
Կ.Տ

**ՃԱՎԱԼ ԱԹԵՐԹՆԱԽԱՀԱՇԻՎ

## ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և սպասարկման ծառայությունների միավորի հաշվարկի

Հազար ՀՀ դրամ

| Հ/Հ | Աշխատանքի նկարագիրը | Չ/մ | Քանակ | միավ | ընդ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Արտաքին լուսավորության լուսատուի ապամոնտաժում | կ-տ | 1 | 1,300 | 1,300 |
| 2 | Արտաքին լուսավորության լուսատուի տեղադրում 95 վտ, 1 էկոնոմ լամպով | կ-տ | 1 | 3,500 | 3,500 |
| 3 | Արտաքին լուսավորության լուսատուի տեղադրում 85վտ, 1 լամպով | կ-տ | 1 | 3,500 | 3,500 |
| 4 | Արտաքին լուսավորության լուսատուի տեղադրում 250 վտ 1 լամպով | կ-տ | 1 | 3,377 | 3,377 |
| 5 | Արտաքին լուսավորության լուսատուի տեղադրումւ, LED Լարում՝ 220-240վ, հզորություն՝ 100վտ, ԼՈՒՅՍԻ ԳՈՒՅՆ (K) -6500 LEXPLUS | կ-տ | 1 | 26,500 | 26,500 |
| 6 | Արտաքին լուսավորության լուսատուի տեղադրում, LED Լարում՝ 220-240վ, հզորություն՝ 80վտ,ԼՈՒՅՍԻ ԳՈՒՅՆ (K) -6500 LEXPLUS | կ-տ | 1 | 26,000 | 26,000 |
| 7 | Արտաքին լուսավորության լուսատուի տեղադրումւ, LED Լարում՝ 220-240վ, հզորություն՝60վտ, ԼՈՒՅՍԻ ԳՈՒՅՆ (K) -5000 URAN | կ-տ | 1 | 23,760 | 23,760 |
| 8 | Արտաքին լուսավորության լուսատուի տեղադրում, LED Լարում՝ 220-240վ, հզորություն՝ 50վտ, ԼՈՒՅՍԻ ԳՈՒՅՆ (K) -6500 ADNEXT | կ-տ | 1 | 22,380 | 22,380 |
| 9 | Արտաքին լուսավորության լուսատու, LED Լարում՝ 220-240վ, հզորություն՝ 40վտ, ԼՈՒՅՍԻ ԳՈՒՅՆ (K) -6500 LEXPLUS | կ-տ | 1 | 16,360 | 16,360 |
| 10 | Արտաքին լուսավորության լուսատուի տեղադրումւ, LED Լարում՝ 220-240վ, հզորություն՝ 30վտ, ԼՈՒՅՍԻ ԳՈՒՅՆ (K) -6500 ADNEXT | կ-տ | 1 | 18,250 | 18,250 |
| 11 | Արտաքին լուսավորության լուսատու, LED Լարում՝ 220-240վ, հզորություն՝ 24վտ, ԼՈՒՅՍԻ ԳՈՒՅՆ (K) -6500 LEXPLUS | կ-տ | 1 | 3,000 | 3,000 |
| 12 | Լուսարձակի տեղադրում, LED Լարում՝ 220-240վ, հզորություն՝ 80վտ, | կ-տ | 1 | 3,000 | 3,000 |
| 13 | Լուսարձակի տեղադրում, LED Լարում՝ 220-240վ, հզորություն՝ 40, 50, 60վտ, | կ-տ | 1 | 13,440 | 13,440 |
| 14 | Լուսարձակի տեղադրում, LED Լարում՝ 220-240վ, հզորություն՝ 24, 30վտ, | կ-տ | 1 | 10,000 | 10,000 |
| 15 | Լուսարձակի տեղադրում 400վտ | կ-տ | 1 | 16,900 | 16,900 |
| 16 | Լուսարձակի լամպի տեղադրում 400վտ | հատ | 1 | 3,000 | 3,000 |
| 17 | 125-150վտ լուսատուի տեղադրում | հատ | 1 | 3,000 | 3,000 |
| 18 | 250վտ ԴՆԱՏ լամպի տեղադրում | հատ | 1 | 5,900 | 5,900 |
| 19 | 95վտ էկոնոմ լամպի տեղադրում | հատ | 1 | 4,000 | 4,000 |
| 20 | 85վտ էկոնոմ լամպի տեղադրում | հատ | 1 | 3,000 | 3,000 |
| 21 | АПВ,1x16մմԱ կտրվածքով մալուխի մոնտաժում | մ | 1 | 0,192 | 0,192 |
| 22 | ԱՎՎԳ-2*16մմ2 կտրվածքով մալուխի մոնտաժում | մ | 1 | 0,348 | 0,348 |
| 23 | АПВ,1x10մմԱ կտրվածքով մալուխի մոնտաժում | մ | 1 | 0,200 | 0,200 |
| 24 | Կոթառների փոխարինում E-27 | հատ | 1 | 0,720 | 0,720 |
| 25 | Կոթառների փոխարինում E-40 | հատ | 1 | 0,900 | 0,900 |
| 26 | АППВ -2 *2.5մմ2 կտրվածքով լար լուսատուների լիցքավորման համար | մ | 1 | 0,240 | 0,240 |
| 27 | Մետաղաճոպանի անցկացմ Փ3մմ | մ | 1 | 0,220 | 0,220 |
| 28 | Փոսորակի փորում ձեռքով III կարգի գրունտներում | մ3 | 1 | 4,620 | 4,620 |
| 29 | Բետոնե հիմք կանգնակների տակ B 7.5դասի բետոնից | մ3 | 1 | 45,144 | 45,144 |
| 30 | Մետաղական հենասյուների ապամոնտաժում L=7մ | հատ | 1 | 8,950 | 8,950 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 31 | Մետաղական հենասյուների մոնտաժում Φ108*2.5մմ, L=7մ | հատ | 1 | 41,440 | 41,440 |
| 32 | Մետաղական հենասյուների մոնտաժում Φ108*2.5մմ L=1մ | մ | 1 | 10,340 | 10,340 |
| 33 | Մետաղական հենասյուների մոնտաժում Φ=114x2,5մմ L=1մ | մ | 1 | 10,640 | 10,640 |
| 34 | Մետաղական հենասյուների մոնտաժում Φ=114x3,0մմ L=1մ | մ | 1 | 11,500 | 11,500 |
| 35 | Φ32*2.5մմ L=1.20մ Մետաղական պահունակների տեղադրում հենասյուների վրա | հատ | 1 | 2,270 | 2,270 |
| 36 | Φ32*2.5մմ L=1.50մ Մետաղական պահունակների տեղադրում հենասյուների վրա | հատ | 1 | 2,670 | 2,670 |
| 37 | Φ32*2.5մմ L=1.80մ Մետաղական պահունակների տեղադրում հենասյուների վրա | հատ | 1 | 3,000 | 3,000 |
| 38 | Φ32*2.5մմ L=2,00մ Մետաղական պահունակների տեղադրում հենասյուների վրա | հատ | 1 | 3,370 | 3,370 |
| 39 | Φ42*2.5մմ L=1.20մ Մետաղական պահունակների տեղադրում հենասյուների վրա | հատ | 1 | 2,730 | 2,730 |
| 40 | Φ42*2.5մմ L=1.50մ Մետաղական պահունակների տեղադրում հենասյուների վրա | հատ | 1 | 3,270 | 3,270 |
| 41 | Φ42*2.5մմ L=1.80մ Մետաղական պահունակների տեղադրում հենասյուների վրա | հատ | 1 | 3,800 | 3,800 |
| 42 | Φ42*2.5մմ L=2,00մ Մետաղական պահունակների տեղադրում հենասյուների վրա | հատ | 1 | 4,160 | 4,160 |
| 43 | Մետաղական հենասյուների և պահունակների ներկում 2 անգամ | մ2 | 1 | 1,750 | 1,750 |
| 44 | Կրոնշտեյնի տեղադրում | հատ | 1 | 1,860 | 1,860 |
| 45 | Ցածրավոլտ մեկուսիչի տեղադրում ՏՖ-12 | հատ | 1 | 0,620 | 0,620 |
| 46 | Մետաղական պահարանի տեղադրում | հատ | 1 | 22,100 | 22,100 |
| 47 | Լարման կարգավորիչ ԻԶՈՒ | հատ | 1 | 4,100 | 4,100 |
| 48 | Դռոսելի տեղադրում 125վտ | հատ | 1 | 3,000 | 3,000 |
| 49 | Դռոսելի տեղադրում 250վտ | հատ | 1 | 6,860 | 6,860 |
| 50 | Եռաֆազ ավտոմատի տեղադրում ВА 47-29 3Р 63Ա | հատ | 1 | 6,220 | 6,220 |
| 51 | Եռաֆազ ավտոմատի տեղադրում ВА 47-29 3Р 100Ա | հատ | 1 | 9,800 | 9,800 |
| 52 | Միաֆազ ավտոմատի տեղադրում ВА 47-29 1Р 63Ա | հատ | 2 | 3,970 | 7,940 |
| 53 | Միաֆազ ավտոմատի տեղադրում ВА 47-29 1Р100Ա | հատ | 2 | 5,400 | 10,800 |
| 54 | Միաֆազ ավտոմատի տեղադրում ВА 47-29 1Р 125Ա | հատ | 2 | 10,300 | 20,600 |
| 55 | Մագնիսական թողարկիչի տեղադրում կԾժ-122 63-65Ա | հատ | 1 | 19,000 | 19,000 |
| 56 | Մագնիսական թողարկիչի տեղադրում կԾժ-122 85-90Ա | հատ | 1 | 34,170 | 34,170 |
| 57 | Մագնիսական թողարկիչի տեղադրում կԾժ-122 100-110Ա | հատ | 1 | 45,160 | 45,160 |
| 58 | Ֆոտոռելեի տեղադրում | հատ | 1 | 10,780 | 10,780 |
| 59 | Ժամանակի ռելեի տեղադրում | հատ | 1 | 23,850 | 23,850 |
| 60 | Հաշվիչի տեղադրում Էլեկտրաէներգիայի, եռաֆազ ՍՏԷՄ-3Վ, 100Ա, բազմասակագնային | հատ | 1 | 69,900 | 69,900 |
| 61 | Հաշվիչի տեղադրում Էլեկտրաէներգիայի, եռաֆազ ՍՏԷՄ-3Վ, 60Ա, բազմասակագնային | հատ | 1 | 56,150 | 56,150 |
| 62 | Լամպի տեղադրում, LED , լարում՝ 220-240վ, հզորություն՝ 7վտ | կ-տ | 1 | 1,030 | 1,030 |
| 63 | Լամպի տեղադրում, LED , լարում՝ 220-240վ, հզորություն՝ 8վտ | կ-տ | 1 | 1,160 | 1,160 |
| 64 | Լամպի տեղադրում, LED , լարում՝ 220-240վ, հզորություն՝ 10վտ | կ-տ | 1 | 1,230 | 1,230 |
| 65 | Լամպի տեղադրում, LED , լարում՝ 220-240վ, հզորություն՝ 12վտ | կ-տ | 1 | 1,380 | 1,380 |
| 66 | Լամպի տեղադրում, LED , լարում՝ 220-240վ, հզորություն՝ 28-30վտ | կ-տ | 1 | 4,120 | 4,120 |
| 67 | Լամպի տեղադրում, LED , լարում՝ 220-240վ, հզորություն՝ 38-40վտ | կ-տ | 1 | 4,800 | 4,800 |
| 68 | Լամպի տեղադրում, LED , լարում՝ 220-240վ, հզորություն՝ 50վտ | կ-տ | 1 | 6,000 | 6,000 |
| 69 | Պարսպի լուսատուի տեղադրում, կլոր D=200մմ | կ-տ | 1 | 2,190 | 2,190 |
| 70 | Պարսպի լուսատուի տեղադրում, կլոր D=250մմ | կ-տ | 1 | 5,500 | 5,500 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 71 | Տրանսվորմատորի տեղադրում 220վ-12վ 5A | հատ | 1 | 110 | 110 |

763,961

**Ընդամենը**

## ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

**Մասիս համայնք**
**ք. Մասիս Կենտրոնական հր. թիվ 4**
**ՀՀ Ֆինանսների նախարարություն**
**Հ/Հ 900 432 450 022**
**ՀՎՀՀ 04240324**

**Դ. Համբարձումյան՝**

---

/ստորագրություն/
Կ.Տ

## ԿԱՏԱՐՈՂ

**<< ՕՆ-ԷՆԵՐՋԻ >> ՍՊԸ**
**Արարատի մարզ գ. Մխչյան Ստեփանյան23**
**ՀՎՀՀ 04238917**
**Հ/Հ 2051522236111001**
**<<Ինեկոբանկ >> ՓԲԸ**

**Տնօրեն՝ Գ.Ռաֆայելյան՝**

---

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 28 » հոկտեմբեր 2022թ. կնքված
ԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-22/85 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50231100 | Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և սպասարկման ծառայություններ | | | | | | | | | | 10 000 000 | 10 000 000 | 10 000 000 | **10 000 000** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**Մասիս համայնք**
**ք. Մասիս Կենտրոնական հր. թիվ 4**
**ՀՀ Ֆինանսների նախարարություն**
**Հ/Հ 900 432 450 022**
**ՀՎՀՀ 04240324**

**Դ. Համբարձումյան՝**

-----------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

**<< ՕՆ-ԷՆԵՐՋԻ >> ՍՊԸ**
**Արարատի մարզ գ. Մխչյան Ստեփանյան23**
**ՀՎՀՀ 04238917**
**Հ/Հ 2051522236111001**
**<<Ինեկոբանկ >> ՓԲԸ**

**Տնօրեն՝ Գ.Ռաֆայելյան՝**

-----------------------------
/ստորագրություն/
Կ.Տ